ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Դասվար

Թեմա ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի համակցված դասերի ներկայացում սովորողների արժեհամակարգի, համոզմունքների և վերաբերմունքի ձևավորմանը նպաստելու տեսանկյունից

Կատարող Զաքիյան Նելլի Գագիկի

Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Գյուլամիրյան Ջուլիետա

Մ. Գ. Դ. , պրոֆեսոր

Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն.....2.

Համակցված դաս ----------4

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում----------5

ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի համակցված դաս----------8

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

Ներածություն

Դաս, դասի տիպերը

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթականդաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Դասը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ,

ինչպիսիք են խաղը, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն: Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպի ու համակարգի ստացվող գիտելիքները:

Դասի հիմնական նպատակն աշակերտների պատրաստվածության գնահատելն ու շտկումներ կատարելն է: Դասերը սովորաբար կազմակերպվում են ստուգողական գրավոր աշխատանքների, շարադրությունների և փոխադրությունների տեսքով:

Դասը դասակարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս

2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)

3. Ընդհանրացման և համակարգման դաս

4. Համակցված դաս

5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս

Համակցված դաս

Կառուցվածքի առումով դասի թերևս ամենաճկուն տեսակը, որը թույլ է տալիս մեկ դասաժամի ընթացքում լուծել միաժամանակ մի քանի դիդակտիկական խնդիր, մասնավորապես՝ գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցանվող նյութի շուրջ որոշակի աշխատանքների կազմակերպում և այլն։

Համակցված դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ (այս դասը ունենում է մեկ կամ մի քանի դիդակտիկ նպատակներ)

Քայլ 1 – կազմակերպել դասի սկզբը։

Քայլ 2 – ստուգել տնային առաջադրանքը, առաջադրել դասի նպատակը։

Քայլ 3 – նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը, այսինքն արդիականացնել

գիտելիքներն ու գործնական և մտավոր կարողությունները։

Քայլ 4 – աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել նոր նյութը, անհրաժեշտության դեպքում տալ

համապատասխան բացատրություններ։

Քայլ 5 – ամրապնդել տվյալ դասի ընթացքում ուսումնասիրած և նորի հետ փոխկապակցված նախորդ նյութերը։

Քայլ 6 – ընդհանրացնել և համակարգել գիտելիքները և կարողությունները, փոխկապակցել նոր և նախկինում ստացված ու ձևավորված գիտելիքները։

Քայլ 7 – ամփոփել դասի արդյունքները։

Քայլ 8 – հանձնարարել տնային առաջադրանք։

Քայլ 9 – նախապատրաստել (ոչ միշտ) նոր նյութի ուսումնասիրմանը (նախնական աշխատանք)։

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Աշակերտին կրթելիս և ընդհանրապես կրթության մասին խոսելիս մենք շատ կարևորում ենք արժեքների ձևավորումը:

Արժեհամակարգի մեջ համախմբված են մարդու բարոյական , գեղագիտական , հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքները:Իսկ այս համակարգը անհրաժեշտ է անձի՝ մեր դեպքում աշակերտի բազմակողմանի զարգացման համար:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

Այսօր շատ կարևոր է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը , և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը: Սովորողների մեջ արժեքային կողմնորոշոմների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական

ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը: Տարրական դպրոցում ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա: «Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները, գոյություն ունեն անթիվ քանակով»- գրում է Ն.Օ. Լոսսկին [5, 32]: Ըստ Բ. Ս. Գերշունսկու, մանկավարժ հետազոտողների խնդիրն է, փիլիսոփայական հետազոտությունների հիման վրա գլոբալ, համամարդկային արժեքների վերափոխումն այնպիսի արժեքների, որոնք ձեռք են բերվում կրթության ոլորտում: Վ. Պ. Զինչենկոն, անձի գործունեության երեք հիմնական բնագավառների առանձնացման հիման վրա, առաջարկում է մանկավարժական գործընթացում իրականացվող հետևյալ արժեքային խմբերը՝ հոգևոր, իմացական, սոցիալական [3, 8]:

Արժեհամակարգի ձևավորման և նրա կայունության համար հանրակրթական բնագավառում անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ մեծ է հումանիտար առարկաների

դերը:Մասնավորապես անգնահատելի է Մայրենիի դերը:

<u>ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի համակցված դաս</u>

Առարկան՝ Մայրենի

2-րդ դասարան

Թեման- **հին դաս**-_Զրույց հեռախոսով: Բառակապակցություն

նոր դաս- Ո՞ր մեկս կամաչի: Արմատ

Նպատակը-

1. **Գիտելիքների համակարգ**

- կընթերցեն բնագիրը՝ զարգացնելով սահուն և հասկանալով կարդալու կարողությունները
- կկարողանան շարադրված դեպքերի մեջ տեսնել պատճառահետևանքային կապեր՝ գուշակելով դրանց հետագա ընթացքը
- հարց ու պատասխանի միջոցով կվերլուծեն բանաստեղծությունը՝ կարևորելով տեղի ունեցող դեպքերը

2.Կարողությունների համակարգ

- կկարողանան որոշել հերոսների արարքները և դրանց դրդապատճառները
- վերլուծություններ և եզրահանգումներ կկատարեն|

1. Արժեքային համակարգ

Ձևավորել հարգանք դիմացինի արժանապատվության նկատմամբ, բարին մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Լեզվատրամաբանական աշխատանք

Գրատախտակին գրված բառերի միջից կգտնեն ավելորդ բառը/ հայրենի/, հայր արմատով կկազմեն բառեր

Դասի տիպը՝ համակցված

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ մտքերի տարափ, զրույց, հարց ու պատասխան,

Դասի ընթացքը

Աշխատանք նախորդ դասի շուրջ

Կընթերցեն բանաստեղծությունը,կկատարեն վերլուծություններ, եզրահանգումներ, աշխատանք կտարվի լեզվական գիտելիքների շուրջ,անդրադարձ և ամփոփում:

Խթանման փուլ

Աշխատանք նոր դասի շուրջ

Զրույց-քննարկում <<Իսկական ընկերը նեղության պահին է երևում>> ասացվածքի շուրջ:

Երեխաները պարզում են, որ ընկերոջը պետք է օգնել, երբ նա օգնության կարիք ունի, օգնելուց դու նաև նեղություն ես կրում, ինչ-որ բան զոհաբերում:

Իմաստի ընկալում

Գրատախտակին գրում եմ վերնագիրը և խառը հաջորդականությամբ շարում պատմվածքի դրվագները: Առաջարկում եմ ընթերցել տեքստի վերնագիրը և դիտել դրվագները: Հետո լուռ ընթերցում են տեքստը՝ ստուգելով իրենց արած կանխագուշակումները:

Նախնական ընկալումը պարզելու նպատակով տալիս եմ հարցեր.

Հաստատվեցի՞ն ձեր կանխատեսումները, ովքեր էին հերոսները, ի՞նչ պատահեց ընկերներից մեկին, ի՞նչպես վարվեց մյուս ընկերը և այլն:

Հետո բարձրաձայն ընթերցում են տեքստը, կատարում աշխատանք բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով:

Աշխատանք լեզվական նյութի շուրջ

Գրատախտակին գրում եմ ***մայրենի, մայրական, հայրենի, մայրիկ, մայրաբար,*** և առաջարկում գտնել ավելորդ բառը(**հայրենի**): Այնուհետև պատմում եմ որևէ հեքիաթ կամ պատմություն արմատի վերաբերյալ:

Տեքստի ընթերցումից հետո կիրառում եմ տեքստի վերարտադրման տարբեր տեսակները:

1. ամբողջական կամ շարունակելով
2. ստեղծագործաբար
    - Պատմեք ջուր չունեցող ընկերոջ անունից:
    - Պատմեք ջուր ունեցող ընկերոջ անունից:
    - Եթե դուք հանդիպեիք ընկերներին, ի՞նչ կասեիք նրանց: Ստեղծեք երկխոսություն:
    - Պատմեք՝ հորինելով շարունակություն՝ ինչ եղավ հետո…

Ստեղծագործական աշխատանքների կատարում

Ամբողջացրու նախադասությունը. *Այս պատմվածքից ես սովորեցի որ…*

- Գրիր փոքրիկ նամակ ջուր ունեցող և ջուր չունեցող ընկերներին:
- Լա՞վ ընկերներ էին արդյոք անապատով գնացող ընկերները:
- Իսկ դու ինչպիսի՞ ընկեր էս: Հիմնավորիր, դեպքեր հիշիր:
- Դու ինչպես կվարվեիր նրանց փոխարեն:
- Եկեք մի պահ ապրենք այն զգացմունքները, որոնք զգացին ընկերները, և պատասխանեք քարտերի վրա գրված հարցերին (աշակերտները իրենց պատկերացնում են հերոսների դերում և պատասխանում իրենց տրված հարցերին).

Ջուր ունեցող ընկեր

- Ի՞նչու ջուր չտվեցիր քո ընկերոջը:
- Դու քեզ լավ ընկեր ես համարում:
- Ի՞նչ զգացիր, երբ ընկերդ ասաց. <<*Քանի դեռ ապրում ենք, դու քո ջրից խոսիր, ես՝ իմ շալակելուց: Տեսնենք՝ որ մեկս կամաչի* >>:
- Ինչպես կարող ես շտկել իրավիճակը:

Ջուր չունեցող ընկեր

- Ինչու՞ ոչինչ չասացիր, երբ հասար ընկերոջդ:
- Ինչու օգնեցիր ընկերոջդ, երբ նա ոտքը կոտրեց:
- Դու կշարունակե՞ս ընկերություն անել այդ ընկերոջ հետ: Որ դեպքում կշարունակես:

Հեղինակ

- Այս պատմվածքը գրելով՝ ի՞նչ ես ուզում մեզ հասկացնել:

Առաջադրանքներ ինքնուրյուն աշխատանքի համար

<<Ինքնուրյուն աշխատանք>> պաստառի վրա փակցնում են գունավոր ինքնակպչուն թղթեր, որոնց վրա գրված են տարամակարդակ առաջադրանքներ:

Դեղին թուղթ (I մակարդակ)- Ընդգծիր տրված բառերի ընդհանուր արմատը. *հայրիկ, հայրաբար, հայրենի, հայրական:*

Կանաչ թուղթ (II մակարդակ)-Ընդգծիր այն բառերը, որոնք կազմվել են *հայր* արմատից. *Հայաստան, հայրենի, հայկական, հայրաբար, հայուհի, հայրիկ:*

Վարդագույն թուղթ (III մակարդակ)-Գտիր *հայր* արմատի ճյուղերը և գրեք տետրում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

Անդրադարձ վերնագրին և նկարազարդմանը

- Պատմվածքի ո՞ր հատվածներն են պատկերված նկարաշարի մեջ:
- Ի՞նչ նոր բան ավելացրեց նկարազարդումը պատմվածքի բովանդակությանը:
- Դրվագները վերնագրեք:
- Նոր վերնագիր ընտրեք պատմվածքին:

Ամփոփում

- Անդրադառնանք <<*Դու քո ջրից խոսիր, ես՝ իմ շալակելուց: Տեսնենք՝ որ մեկս կամաչի* >> արտահայտությանը:

Սովորողները գալիս են այն եզրակացության, որ ջուր չտվող ընկերը, ամեն անգամ հիշելով իր արարքը՝ ջուր չտալը, պիտի ամաչի, պիտի իրեն վատ զգա, որ նեղության մեջ ընկած ընկերոջը չօգնեց, այլ թողեց ու հեռացավ: Իսկ մյուս ընկերը պիտի հիշի, թե ինչպես շալակեց իր ընկերոջը, ինչպես փրկեց նրա կյանքը, և իրեն լավ զգա դրանից:

Տնային աշխատանքի հանձնարարում:

Եզրակացություն

Դասը բարդ ստեղծագործական աշխատանք է: Դասի գիտական կազմակերպումը պահանջում է ուսուցչից մանրակրկիտ նախապատրաստություն:

Այսպիսով աշակերտը կսովորի.

Լսել, հասկանալ և հարգանքով վերաբերվել այլ մարդկանց տեսակետներին ու գաղափարներին:

Արտահայտի սեփական տեսակետը, քննարկի իր ցանկություն ները, խոսի իր զգացումների մասին, մասնակցի բանավեճի, ներկայացնի իր մոտեցումները:

Հասկանա մարդու պահվածքի դրդապատճառները, դրսևորի համապատասխան վարքագիծ:

Իրեն հետաքրքրող կամ հանձնարարված թեմայով պատրաստի հաղորդում, կատարի եզրահանգումներ

Սիրի իրեն, իր ընտանիքը, հայրենիքը:

Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:

Դրսևորի հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:

Ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:

Դասարանում անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություններ , որոնք կսովորեցնեն աշակերտներին նյութի յուրացման ընթացքում ինքնուրույն դիտարկումներ և եզրահանգումներ անելուն, վերլուծելու , համադրելու , ոչ

ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու , լուծումներ որոնելու և գտնելու , որոշումներ կայացնելուն ։

Գրականության ցանկ

<<Դպրոց-կենտրոնների միություն**>>** ԻԱՄ

Կ.Թորոսյան,Կ.Չիբուխչյան,Ա.Բալայան <<Ինչպես պլանավորել մայրենիի դասը >>

Ա. Տեր- Գրիգորյան <<Ընթերցանության մեթոդիկա>>

ԿԶՆԱԿ հիմնադրամ<< Էլեկտրոնային պաշարների շտեմարան**>>**